

ՏՆՏԵՍԱԿԱՆ ԴՐՈՒԹԻՒՆԸ ՌՈՒՍԻԱՅՈՒԿ 1891 ԹԻԱԿԱՆԻՆ ¹⁾

ԳՐԻԳՈՐ ՎԱՐԳԱՆԵԱՆՅԻ

Տնտեսական դրուժիւնը Ռուսիայում ներկայացնում է մի այնպիսի պատկեր, որ իւր սուր բնատրուժեամբ գրաւեց իւր վրայ ամբողջ Եւրոպայի ուշադրութիւնը: Եւրոպական մամուլը լուրջ կերպով ուսումնասիրեց այդ դրուժիւնը և սորա պատճառները: Անկարելի էր անտալբեր մնալ, քանի որ այդ դրուժեան հետեանքները պիտի մի կերպով հասնէին Եւրոպային և սորա տնտեսական շահերը շօշափէին:

Ինչպէս յայտնի է, Ռուսիայի ներկայ տնտեսական տազնապի պատճառը վերագրում են 1891 թւականի վատ հունձքին, որի հետեանքը մեծ սոփն էր: Մասնաւոր անբեր հունձքերը Ռուսիայում յաճախ են պատահում, բայց մի այնպիսի անբերրիութիւն, որ երևան եկաւ 1891 թ., դա մի արտասովոր երևոյթ էր: Ի հարկէ գլխաւոր և անմիջական շարժառիթը այն յանկարծակի մնասնների և նեղութիւնների, որ այժմն ռուսաց ժողովուրդը կրում է, դա սարսափելի անբերրիութիւնն էր: 1891 թւականի վատ հունձք իսկապէս մի պատահական և անցողական դէպք էր, որի դէմ կարելի էր առնել, եթէ ժողովուրդը տնտեսապէս և նիւթապէս բարելաւ դրութեան մէջ գտնուէր: Բայց ներկայ տնտեսական տազնապի պատճառ-

¹⁾ Russlands wirtschaftliche Lage im Jahre 1891, von Wilhelm Henkel. Deutsche Zeit-und Streitfragen. Heft 98.

ները ունեն աւելի խոր արմատներ, որ կարելի է գտնել միայն լրջութեամբ որոնելով:

Յերթեցէք այն բոլոր գրեւծքները, որոնք ուսումնասիրում են Ռուսիայի 1891 թ. վատ հունձի պատճառները և սովը, և դուք կը տեսնէք, որ դժբաղդութեան գլխաւոր պատճառը գտնում են գիւղացիների և մեծ հողատէրերի տնտեսութեան պակասութիւնների մէջ:

Այս պակասութիւնների մասին խօսելուց առաջ, յիշենք ուսուցիչացու բարոյական էութիւնը նամանաւանդ ճորտութեան վերանալուց յետոյ: Յայտնի է, որ ճորտութեան վերանալուց յետոյ (1861 թ.ից) գիւղացին ազատուեց այն բոլոր կապանքներից, որ նրան կաշկանդում էին տնտեսական ասպարիզում: Գիւղացին այժմ կարող էր իւր տնտեսութեան և հողի մշակութեան ձեւերը փոխել այնպէս, ինչպէս ինքը ցանկանում էր: Նա կարող էր օրէնքի զօրութեամբ կարգադրութիւն անել իւր հողից ստացած արդիւնքի վերայ իւր կամքի համեմատ, իբրև կատարեալ սեպհականատէր, վճարելով որոշ ժամանակամիջոցում իւր նախկին հողատէրին հող յետ գնելու մի յայտնի գումարը: Մի խօսքով գիւղացին դառաւ ըստ օրէնքի կատարեալ անկախ մարդ, որ ինքն իրան պիտի պահպանէր գոյութեան կուլի մէջ: Գիւղացիների ազատութեան գործը ուսաց ժողովրդի կեանքի համար անկասկած ունեցաւ փրկարար ազդեցութիւն: Բարոյապէս էլ գիւղացին հանդիսացաւ իբրև մի մարդկային էութիւն, որի մտածելը, զգալը և գործելը ոչ մի արգելք չը պէտք է հանդիպէր:

Այժմս խնդիրը նրանումն է թէ՛ գիւղացին ձեռք բերելով անկախութիւն՝ ո՞ր աստիճան ընտելացաւ անկախ և ինքնուրոյն գործունէութեան ՅՈ տարւայ ժամանակամիջոցում, որ անցել են ճորտութեան վերանալուց յետոյ: Գիւղացիների ներկայ դրութիւնը այնպէս է, որ կարծես թէ ազատութեան բարիքները նոքա չեն վայելել և թէ օրէնքի բարերարութիւնը աւերւոյթ է անցել:

Այսպէս պնդում են, որ գիւղացին մնացել է դարձեալ ծոց, անզգոյշ, անփոյթ և որ ցաւալին է, նա արբեցող և անձնատուր է իւր հին սովորութիւններին և մոլութիւններին: Եթէ գիւղացին մտնելով տնտեսական և հասարակական նորագոյն կեանքը չէ մաքրուել իւր նախկին բարոյական պակասութիւններից, դա մի պատճառ պէտք է ունենայ, որ գուցէ բղխում է նոյն իսկ իւրնոր դիրքից,

բայց որի մասին դեռ կարելի է վիճել. իրողութիւնը միայն սա է, որ այդ բարոյական պահասութիւնները փնասում են նորա այժմեայ տնտեսութեանը: Այսպէս ամեն ժամանակ, երբոր գիւղացուն մի զժրաղղութիւն է հանդիպում, նա տակաւին զիմում է իւր նախկին հողատէրին օգնութեան համար: Գիւղացին իւր յոյսերը դրած ունի իւր նախկին հողատէրի խնամութեան վրայ: Երբ որ գիւղացուն փայտ է հարկաւոր, կամ փող է հարկաւոր տաւար առնելու համար, դա զիմում է կրկին նախկին հողատէրին: Ուրեմն ինչից պիտի եզրակացնել, որ գիւղացին յառաջադիմել է:

Այն տնտեսական հանգամանքները, որոնց մէջ գիւղացիները գտնուում են, հետեւեալն են.

Ոսկորաբար գիւղացիները բաժանում են իրար մէջ համայնական հողը: Իւրաքանչիւր գիւղական ընտանիք ստանում է մի փոքրիկ հողի կտոր և սորա հետ մի քիչ տաւար և քիչ մշակելու գործիքներ: Եթէ հողը բաւական է, տաւարը և մշակելու գործիքները անբաւ են խելացի և արդիւնաւոր կերպով տնտեսելու: Իսկ առհասարակ թէ հող և թէ այլ գիւղատնտեսական պարագաներ բաժանուած ընտանիքները շատ քիչ են ստանում: Բայց տաւարի քուլթիւնը շատ աւելի զգալի է լինում: Որտեղ տաւար քիչ է, այնտեղ հող պարարտացնելու միջոցները պակասում են: Տաւարի աղբի պակասութիւնը տալիս է տնտեսութեան մեծ փնասներ, որոնց գիւղացիները չեն զիմանում: Այս պատճառով բազմաթիւ տեղերում Ռուսիայի հողերը մնում են առանց խնա Դքի և դադարում են արդիւնք տալ, չը նայած իրանց բնածին արդիւնաւոր յատկութիւններին: Այս դէպքերում գիւղացուն անհրաժեշտ է կազմակերպուած գիւղատնտեսայան վարկ (գիւղական բանկ), որ բացակայում է: Հետեւաբար գիւղացիները փողի հարկաւորութիւնից ստիպուած՝ ընկնում են վաշխառուների ձեռքները, որոնք մի տարւայ մէջ նրանցից մինչ 150% են վերցնում: Բայց եթէ գիւղացին այսպիսի թանկ վարկն էլ չէ ձարում, ձախող հանգամանքը նրան ստիպում է ծախել իւր ունեցածները: Սարսափելի է սրանից յետոյ գիւղացու դրութիւնը: Նա տալիս է իրան իւր ոսկորական արբեցողութեանը և զրկուած լինելով ամեն բանից՝ սխտում է թափառական կեանք վարել գործ ձարելու համար: Գիւղացիները, գտնուելով անյաջող տնտեսական պայմանների մէջ, չեն

ստանում իրանց հողերից բաւական արդիւնք, որպէս զի նոքա կարողանան պարտաւորիչ հարկեր անգամ վճարել: Միւս կողմից հարկերը շատ յաճախ աւելի բարձր են քան հողի արդիւնքը: Չընայած այս բանին, հողը կը տար մեծամեծ արդիւնքներ, եթէ նա խելացի կերպով տնտեսւէր: Իսկ խելացի տնտեսութեան համար անհրաժեշտ են կազմակերպած վարկ և գիւղատնտեսական կատարելագործւած գործիքներ, որոնց պակասութիւնը մի ազաղակող ցաւ է պատճառում գիւղացիներին: Էլ ինչ ասել կ'ուզի այն բանի մասին, որ գիւղացիների համար դժւար է լինում իրանց նախկին տէրերին հողեր լետ գնելու գումարները վճարել:

Երբէք չը պիտի կարծել, որ Ռուսիայում հողը պակասում է: Միայն հարկաւոր են հողերի աւելի արդար բաշխումն գիւղացիների մէջ և խելացի տնտեսութիւն: Ապա թէ ոչ՝ վերև նկարագրած տնտեսական պայմանների տիրապետութեան ներքոյ գիւղատնտեսութիւնը չի կարող ծաղկել: Եւ մի ընդհանուր երաշտութեան տարի, որի դէմ կուելու գիւղացին անպատրաստ է, պիտի 1891 թւականի նման մի ընդհանուր աղէտ առաջացնի:

Եթէ այդ է գիւղացիների տնտեսութեան զրութիւնը, հետաքրքրական է իմանալ մեծ կալւածատէրերի տնտեսական վիճակը: Վերջինների մասին մի ընդհանուր կարծիք է տիրապետում, թէ նոցա հողերը մեծ մասամբ ծանրաբեռնւած են պարտքերով, ասել է թէ հողատէրերը գրաւ դրած ունեն իրանց հողերը և մինչ այն աստիճան, որ պարտքերը հողի գներից աւելի են: Սոքա իրողութիւններ են, որ կարելի է թւերով ասացուցել: Շատանանք մի օրինակով, որ մեզ մի յայտնի գաղափար կը տայ հողատէրերի պարտքերի անընդհատ աւելման մասին: 1859 թւականին 50 նահանգների հողատէրերի պարտքը մասնաւոր վարկային հիմնարկութիւններին հասնում էր 425.503,061 ռուբլու: 1883 թ. այդ պարտքը միւսոյն 50 նահանգներում բարձրանում է 465.469,258 ռուբլու. ուրեմն 40.066,187 միլիոն աւելի քան 1859 թ. ¹⁾ Աւելցնենք սորա վրայ և այն ֆակտը, որ բոլոր հողատէրերի մեծ մասը

¹⁾ Труды Императорскаго вольно-экономическаго общества № 1 Январь 1889 г.

գիւղատնտեսներ չեն, այնպէս որ այս պայմաններում անհնարին է սպասել չառաջադիմութիւն գիւղատնտեսութեան մէջ:

Սակայն անբերութեան մասին խօսելիս պէտք է աչքի առնել կլիմայի և հողի պայմանները, որոնք ոչ միայն նպաստում են անբերութեան, այլ և ուղղակի սպառնում են շնջել ապագայում հողի արդիւնաւորութիւնը և առհասարակ բուսականութիւնը: Այս վերաբերութեամբ արւած են հետազոտութիւններ, որոնք ապացուցանում են, որ Ռուսիայի շատ գետերում ջուրը սկսել է պահասել. ուրիշ խօսքերով գետերը ցածրանում են: Այդ երևոյթը մեկնում են մասամբ նրանով, որ գետերի ափերի վրայ ապրող բնակիչները թափում են ջրի մէջ ամեն տեսակ կեղտ և այլն: Տարիների ընթացքում գետերի մէջ թափած կեղտերը կուտակոււմ են և սկսում են ջրի առատութիւնը նւազեցնել, այնպէս որ վարելահողերի արդիւնաւորութեան համար հարկաւոր խոնաւութիւնը նւազում է: Բայց ամենից շատ նւազացնում է հողերի խոնաւութիւնը այն անհերքելի իրողութիւնը, որ Ռուսիայում անտառները ոչնչացնում են անզուլթ կերպով: Ինչպէս յայտնի է, անտառներից տւած խոնաւութիւնը ահագին և համարեա վճռողական նշանակութիւն ունի թէ կլիմայի մեղմութեան և թէ հողի յատկութիւնների համար: Անտառները տալիս են մեզ յորդառատ անձրևներ, Իսկ այն տեղերում, ուր անձրևները շատ քիչ են գալիս, հողը սկսում է չորանալ և այնուհետև աւազով ծածկւել: Արդէն Ռուսիայում ահագին տարածութեամբ վարելահողերը ծածկւել են աւազով հէնց շնորհիւ խոնաւութեան անյայտանալուն ¹⁾:

Ինչպէս ընթերցողը տեսնում է, անբերրիութիւնը Ռուսիայում բոլորում է մի կողմից այն աննպաստ պայմաններից, որ վերաբերում են գիւղացիների և բոլոր հողատէրերի վատ տնտեսութեանը, իսկ միւս կողմից հողի և կլիմայի վատթար պայմաններից, որոնք ուղղակի հետեանք են հանդիսանում մարդկային յափշտակիչ և գիշատիչ անտեսութեան ձևերին: Այսպէս է մեկնում ռուսաց լուրջ մամուլը անբերութեան պատճառները, այդպիսի մեկնութիւն տալիս է և եւրոպական մամուլը, որի արձագանքը մենք լսում ենք ի միջի սլոց և վերը չիշած գերմանական գրքոյկի մէջ:

¹⁾ Համեմատելէք նաև «Մուրճ»-ի ալս Ձձ-ի թղթակցութիւններ Ռուսաստանից

Ուրեմն ինչ պէտք է արած այս դրութեան առջև, որ կարող է նաև ապագայում տեղիք տալ անբերրիութիւններին: Ահա մի նշանաւոր խնդիր, որ իւր ծանրութիւնով մոռացնել է տալիս ուրիշ խնդիրները, որովհետև այս խնդրի նպաստաւոր լուծումից կախած է երևում հարիւր միլլիոնաւոր ազգաբնակչութեան ապահովութիւնը և գոյութիւնը: Ռուսիան, որ պարունակում է 23 միլլիոն քառակուսի կիլոմետր, պիտի կարողանայ ոչ միայն իրան կերակրել իւր հացով, այլ և ամբողջ Եւրոպային: Համեմատ այս մեծ կոչման՝ Ռուսիան պիտի ամեն ջանք գործ դնի գիւղացիների տնտեսական դրութիւնը բարելաւելու: Նա պիտի ձեռք մեկնի այնպիսի միջոցների, որոնք ընդունակ են իւր հողին այն բերրիութիւնը վերադարձնել, որով բնութիւնը այդ հողը օժտել է: Իսկ է, որ այս նպատակի համար հարկաւոր կը լինեն մեծ աշխատանք և դրամական միջոցներ: Սակայն արդիւնքը այնքան մեծ կը լինի, որ սա կը վարձատրի բոլոր գործ դրած աշխատանքը: Արդէն փորձեր արւած են և տւել են լաւ հետեւանքներ: Օրինակ Ռուսիայի մի տեղում այսպէս անւանւած—Михайловский хуторъ, округъ усти Мѣдвѣдица—շինւած են մեծ աւազաններ, որոնք կարող են պարունակել 350.000 խորանարդ ոսնաչափ ջուր: Այս աւազանների մէջ պահուում է ձիւնից ստացած ջուրը և սրանով ոռոգում են 600 դեսեատին հող: Հունձքի ժամանակ զանազանութիւնը շատ մեծ էր ստացած քանակութիւնների մէջ՝ ոռոգւած և ոչ ոռոգւած հողերից: Մէկ դեսեատին արհեստական կերպով ոռոգւած հողը տւել էր 15 չետերտ ցորեն, իսկ մի դեսեատին ոչ ոռոգւածը տւել էր 4¹/₂ չետերտ ցորեն: Այս փայլուն գործը ապացուցեց, որ աւազով պատած և ծածկւած հողերը պտղաբեր դարձնելու համար հարկաւոր է արհեստական ոռոգումներ սահմանել և մանաւանդ անտառները ամենայն խստութեամբ խնամել: Միայն թէ նման գործերը չը պէտք է մասնաւոր նախաձեռնութեան թողնել: Այստեղ օրէնսդրական եռանդոտ քայլերը միայն կը ծառայեն նպատակին: Օրէնսդրութեան գործը և պաշտօնն է՝ հրամայել և ստիպել, որ ամենուրեք, ուր հարկն է, նմանօրինակ գործեր խիստ կերպով կատարեն: Օրէնսդրութիւնը ղոցա պարտաւորեցուցիչ պիտի դարձնի: